

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

**ԻՍԿԱՆԴԱՐՑԱՆ ՄԻՄԱ ԱԼԲԵՐՏԻ**

**ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**Երևան - 2014**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում

**Գիտական ղեկավար՝**

իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Արմեն Շուրայի Հարությունյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Արմեն Հենրիկի Երիցյան**

իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
**Աշոտ Սերյուժայի Հայրապետյան**

**Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի նոյեմբերի 10-ին, ժամը 16:30-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող ԲՈՀ-ի Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդում (0028, Երևան - 28, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թվականի հոկտեմբերի 10-ին:

**Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր՝**

**Ա.Հ. Խաչատրյան**

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտվող թեմայի արդիականությունը:** Դեռևս մանկությունից յուրաքանչյուր մարդ դառնում է իրավունքների որոշակի մի ամբողջության կրող: Սակայն մինչև նախորդ հարյուրամյակի կեսերը երեխան չէր դիտարկվում որպես իրավունքի սուբյեկտ: Դրա ապացույցն են 20-րդ դարի հայտնի մտածող Մարիա Մոնտեսսորիի ուսումնասիրությունները, որտեղ նշում է, որ «Երեխան մեծահասակի վերարտադրությունն է, որը տնօրինում է նրան այնպես, ասես երեխան լինի իր սեփականության մի մասը: Ստորուկը երբեք այդպես չի պատկանել իր տիրոջը, ինչպես երեխան ծնողներին»:<sup>1</sup>

Պատմությունը ցույց է տալիս, որ երջանիկ մանկության մասին կարգախոսները, որոնք ամրագրված չեն իրավական ակտերով, հիմնված չեն պետության ուժեղ և արդար քաղաքականության վրա, չեն ստանում նյութական և ֆինանսական աջակցություն՝ որպես աճող սերնդի բնականոն կենսագործունեության գրավականներ, այդպես էլ մնում են դատարկ բարձրագույն խոսքեր: Ի տարբերություն ազգային իրավունքի՝ միջազգային իրավունքի նորմերով ավելի վաղ են ամրագրվել հասարակության առավել խոցելի խմբերի պաշտպանությանն ուղղված միջոցներ՝ բոլոր նրանց համար, ովքեր զուրկ են իրենց իրավունքները պաշտպանելու իրական հնարավորություններից: Այդ խմբին առաջին հերթին դասվում են երեխաները:

Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո Ազգերի Լիգայի շրջանակներում ստեղծվեց երեխաների մասին հոգածության Միջազգային ասոցիացիան: 1924թ.-ին ընդունվեց Երեխայի իրավունքների Ժնևյան հռչակագիրը: 1945թ.-ին Միավորված Ազգերի Կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Գլխավոր ասամբլեան հիմնեց Մանկական ֆոնդը (այսուհետ՝ ՅՈՒՆԻՍԵՖ): 1959թ.-ին ՄԱԿ-ի կողմից ընդունվեց Երեխայի իրավունքների հռչակագիրը: Հատկանշական է այն, որ 1924թ.-ի հռչակագրում երեխաները դիտարկվում էին բացառապես որպես պաշտպանության օբյեկտ, իսկ 1959թ.-ի հռչակագրում նկատվում էր երեխաներին՝ իրավունքի ինքնուրույն սուբյեկտ համարելու միտում: 1989թ.-ի նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց Երեխայի իրավունքների մասին հռչակագիրը, որով ամրագրեց երեխայի՝ որպես հատուկ սուբյեկտի կարգավիճակը:

Երեխայի իրավունքների մասին հռչակագիրը ստեղծեց երեխայի նկատմամբ վերաբերմունքի նոր մոդել, որը ելակետ հանդիսացավ ընտանիքում և հասարակության մեջ երեխայի կարգավիճակի փոփոխության համար: Այդ առնչությամբ հետաքրքրական է հետևյալ միտքը, որ «Ժամանակակից իրավագետներից և ոչ մեկն այլևս չի վիճարկում այն փաստը, որ երեխան

---

<sup>1</sup> Stéu՝ Богуславский М.В., Корнетов Г.Б. Антология гуманной педагогики, М., 1999, էջեր 90-91:

հանդիսանում է իրավունքների ինքնուրույն կրող, հետևաբար՝ իրավունքի հատուկ սուբյեկտ»:<sup>2</sup>

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու ապահովումը մեր օրերում հանդիսանում են պետաիրավական կարևորագույն հիմնահարցերից մեկը: Երեխաները բոլոր ժամանակաշրջաններում և հասարակարգերում մշտապես հանդիսացել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը: Երեխաները ցանկացած պետության և հասարակության ապագան են և նրանից, թե որքանով են պաշտպանված նրանց իրավունքները, կախված է նաև մեր հասարակության ապագան: Ինչպես և ցանկացած քաղաքակիրթ պետություն, որն իր առաջնահերթ գործառույթներից է համարում հասարակության անչափահաս անդամների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետությունը ևս հոգատարություն է դրսևորում իր ապագա քաղաքացիների բարոյապես և ֆիզիկապես ճիշտ զարգացման և դաստիարակության հանդեպ:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության պաշտպանության և հովանավորության ներքո: Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների պաշտպանությունը և ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանիքում երեխայի դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից:<sup>3</sup>

Քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններն իրենց անդրադարձն ունեցան նաև երեխաների կարգավիճակի վրա: Պատահական չէ, որ մեր երկրի անկախացումից հետո ընկած ժամանակաշրջանում պետությունն առավել մեծ ուշադրություն է դարձնում ընտանիքի և երեխայի շահերի պաշտպանությանը՝ կատարելագործելով օրենսդրական դաշտը՝ հիմք ունենալով միջազգային-իրավական այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Երեխայի իրավունքների մասին ՄՄԿ-ի կոնվենցիան և այլն: Վերջին տասնամյակի ընթացքում էական տեղաշարժեր են գրանցվել ոչ միայն երեխաների իրավական կարգավիճակն ամրագրող իրավական ակտերում, այնպես էլ՝ իրական կյանքում:

---

<sup>2</sup> St' u` Кобилова С.А., Леонтьева Е.А. Права ребенка и гарантии их защиты в международном и российском законодательстве. Публично и частное право: проблемы развития и взаимодействия, законодательного выражения и юридической практики: Материалы Всероссийской научно-практической конференции. Екатеринбург, 1999, էջ 21:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 546:

Այնուամենայնիվ, չնայած երեխաների իրավական կարգավիճակի ամրապնդմանն ուղղված բազմաթիվ դրույթների ամրագրմանն իրավունքի տարբեր ճյուղերում և ՀՀ-ում առկա երեխաների պաշտպանությամբ ու իրավունքների ապահովմամբ զբաղվող ենթակառուցվածքների գոյությանը, մենք շարունակում ենք բախվել երեխաների իրավունքների խախտումների մասին վկայող բազմաթիվ փաստերի հետ: Բացակայում է իրապես մարդասիրական, համաչափ և կշռադատված մոտեցումը, որը կվկայի մեր հանրապետությունում երեխաների նկատմամբ լիարժեք հոգատարության, կյանքի և առողջության պաշտպանության, անձեռնմխելիության և այլ իրավունքների պաշտպանության մասին:

Այսօր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամքի թվով 6 հաստատություն (մանկատուն)՝ 3 ընդհանուր տիպի մանկատուն և 3 մասնագիտացված մանկատուն, որտեղ խնամվում է շուրջ 731 երեխա, այդ թվում՝ 506-ը՝ մասնագիտացված մանկատներում:

Նախարարության համակարգում գործում է երեխաների խնամքի և պաշտպանության 8 գիշերօթիկ հաստատություն, որոնք իրականացնում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքների 6-18 տարեկան երեխաների խնամքը և դաստիարակությունը: Ներկայում երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում խնամվում են սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 750 երեխա:<sup>4</sup>

Նշվածը վկայում է այն մասին, որ պետությունը երեխաների խնամքի նման հաստատությունների ստեղծմամբ միջոցներ է ձեռնարկում երեխաների սոցիալական խնդիրների լուծման համար, սակայն երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման և շուրջօրյա հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման նպատակով ոչ պակաս կարևորություն է ներկայացնում երեխայի շուրջօրյա խնամք և պաշպանություն իրականացնող հաստատություններից երեխաների բեռնաթափման և դեպի այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման գործընթացը:

Թեպետ ՀՀ օրենսդրությունը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակարանի իրավունքը, սակայն առկա են խնդիրներ այդ իրավունքի գործնականում իրացման ապահովման ոլորտում:<sup>5</sup>

---

<sup>4</sup> Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր/ Վիճակագրություն: [http:// www.mlsa.am/home/index.php?menu\\_id=110&child\\_id=128&code\\_id=200](http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=128&code_id=200)

<sup>5</sup> 2007-2009թթ.-ի ընթացքում «Պետական աջակցություն մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանով ապահովման» երկու ծրագրերի շրջանակներում պետք է գնվեր 201 բնակարան, որի համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 1.512.0 մլն ՀՀ դրամ, մինչդեռ փաստացի ձեռք է բերվել 40 բնակարան, որի համար ծախսվել է ընդամենը 274.5 մլն դրամ, կամ ծրագիրը կատարվել է 20%-ով: Պետական ծրագրերի հանդեպ ցուցաբերած

Չի կարելի բավարար համարել նաև երեխայի շահերի պաշտպանության մակարդակը քրեախրավական ոլորտում: Մուրացկանության, թափառաշրջիկության, մանկական պոռնոգրաֆիայի աճը ցանկացած պետության համար համարվում են խայտառակ հակասոցիալական երևույթներ, որոնց դեմ պայքարը պահանջում է ծայրահեղ գոծություն և օպերատիվություն: Թեպետ ՀՀ Գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՊՀ երկրների խմբում ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների նվազագույն ցուցանիշն արձանագրվել է Հայաստանում<sup>6</sup>, այնուամենայնիվ ակնհայտ է, որ ՀՀ-ում նշված բնույթի գրանցված հանցագործությունների ցուցանիշները չեն արտահայտում այդ հանցագործությունների իրական պատկերը, քանի որ այս բնույթի հանցագործություններն ունեն լատենտայնության բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է նրանով, որ այդ հանցագործություններից տուժածներն անչափահաս են, որոնք կա՛մ չեն գիտակցում իրենց նկատմամբ կատարված գործողությունների հանցավոր բնույթն ու չեն բարձրաձայնում դրա մասին, կա՛մ իրենք կամ իրենց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները շահագրգռված են, որպեսզի չբացահայտվեն համապատասխան դեպքերը (անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը, երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործման, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը և այլն):

Չնայած այս ոլորտում մեծ թվով իրավական ակտերի առկայությանը, որոնք երաշխավորում են երեխայի իրավունքների և օրինական շահերի ապահովումը, այնուամենայնիվ նրանց իրական պաշտպանվածության աստիճանը չի կարելի գնահատել բավարար: Նույն եզրահանգումը կարելի է կատարել նաև այս հիմնահարցին վերաբերող վերջին ժամանակաշրջանի գիտական ուսումնասիրությունների վերաբերյալ, որոնք փաստորեն չեն լուսաբանում այս ոլորտի խնդիրները կամ անդրադառնում են դրանց մասնակիորեն:

---

անպատասխանատու վերաբերմունքի պատճառով 2008-2009 թթ.-ի բյուջետային միջոցներով՝ 1 մլրդ 47 մլն 2 հազար ՀՀ դրամ, ոչ մի բնակարան չի գնվել: Մանրամասն տե՛ս՝ ՀՀ Վերահսկիչ պալատի 2009թ.տարեկան հաշվետվություն: Հավելված ՀՀ Վերահսկիչ պալատի խորհրդի 2010թ.-ի մարտի 30-ի թիվ 10/3, Երևան, 2010, էջ 23:  
[http://www.coc.am/files/year\\_reports/Arm\\_13\\_1\\_2011\\_17\\_3\\_22\\_jowigvmi.pdf](http://www.coc.am/files/year_reports/Arm_13_1_2011_17_3_22_jowigvmi.pdf)

<sup>6</sup> Տե՛ս՝ ՀՀ Դատախազության տեղեկանք՝ ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններով հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացված հղկողության վիճակի մասին: 2011, էջ 4:

Վերոգրյալները հաշվի առնելով, ինչպես նաև ընդունելով ցանկացած պետության մշտական ուշադրությունը երեխայի իրավական կարգավիճակի հանդեպ, սույն ատենախոսության թեմայի արդիականությունն անվիճելի է:

**Թեմայի գիտական հետազոտվածությունը:** Թեմայի առանձնահատկությունը պայմանավորված է երեխայի իրավունքները մարդու իրավունքներից զատ, որպես առանձին ինստիտուտ ուսումնասիրելու անհրաժեշտությամբ: Միայն երեխային՝ որպես իրավունքի առանձին սուբյեկտ դիտարկելու դեպքում, մենք արժանի տեղ և դեր ենք հատկացնում նրան հասարակության և պետության մեջ, բացահայտում տվյալ հատուկ խմբի յուրաքանչյուր ներկայացուցչի իրավական կարգավիճակը:

Ատենախոսության թեման ուսումնասիրվել է արտասահմանյան սահմանադրական իրավունքի գիտության մի շարք ներկայացուցիչների կողմից: Մասնավորապես արժանի է նշել Ա. Ալեկսեևի, Դեն Օ'Դոնելլի, Ե. Լուկաշովի, Կ. Խյուֆների, Վ. Կարտաշնիչի, Տ. Համարբերգի. Մ. Մարչենկոյի, Ռ. Մյուլլերսոնի, Ս. Մեպհամի, Ֆ. Ռայանովի, Վ. Ռոյթերի, Տ. Տիտովի, Մ. Վուդհեդի, Տ. Ռոբերտսոնի և այլոց աշխատությունները, որոնցում առավել համակողմանիորեն բացահայտվել են հիմնախնդրի էությունն ու բովանդակությունը և որոնք տեսական հիմք են հանդիսացել սույն ատենախոսական հետազոտության համար:

Երեխայի իրավունքները և ազատությունները, պետական մակարդակով նրանց ապահովման ու պաշտպանության հետ կապված հարցերը, չնայած դրանց տեսական ու գործնական նշանակությանը, հայկական իրավագիտության հատուկ հետազոտության առարկա չեն դարձել: Նշված հիմնախնդրի միայն այս կամ այն կողմերը հետազոտվել են Ա. Երիցյանի, Վ. Այվազյանի, Ա. Առաքելյանի, Մ. Անտոնյանի, Է. Գրիսի, Դ. Թումասյանի, Վ. Կարմիրշալյանի, Ա. Հարությունյանի, Գ. Հարությունյանի, Գ. Հովհաննիսյանի, Ա. Հայկյանցի, Վ. Փիլիպոսյանի և այլոց աշխատություններում:

Առկա բոլոր ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են միայն երեխայի առանձին իրավունքների կամ հիմնահարցերի ուսումնասիրմանն ու լուսաբանմանը, այլ ոչ թե նրանց ամբողջական ուսումնասիրությանը կամ էլ երեխայի իրավական կարգավիճակն ուսումնասիրել են որպես իրավունքի մեծահասակ սուբյեկտների իրավական կարգավիճակի բաղկացուցիչ մաս: Այս առումով սույն ատենախոսությունը հայկական իրավագիտության մեջ երեխայի իրավական կարգավիճակին և նրա պաշտպանության սահմանադրաիրավական հիմնախնդիրներին վերաբերող առաջին համալիր գիտական ուսումնասիրությունն է:

**Ատենախոսության նորմատիվ հիմքը:** Ատենախոսության նորմատիվ հիմք են հանդիսացել միջազգային և ազգային իրավական ակտերը, մասնավորապես՝ միջազգային պայմանագրերից՝ Ազատագրված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոնները, Անչափահասների իրավախախտումների կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշները (Ռիադի ուղենիշներ), Անչափահասների արդարադատության կառավարման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները

/Պեկինի կանոններ), Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիան, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԱՄԿ) կոնվենցիան, Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման Բնագավառում համագործակցության մասին Հաագայի կոնվենցիան, Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին ԱՄԿ-ի կոնվենցիան, Մարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան, Նվազագույն տարիքի մասին ԱՄԿ կոնվենցիան, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, Փախստականների կարգավիճակի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան, Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրությունը, ինչպես նաև ՀՀ օրենքները և ենթօրենսդրական ակտերը, այն է՝ ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ օրենսգրքերը՝ այդ թվում՝ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ օրենքները «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքը, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության որոշումները՝ մասնավորապես՝ ՀՀ Կառավարության N1745-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ.-ի ազգային ծրագիրը հաստատելու մասին», ՀՀ Կառավարության N459-Ն որոշումը «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության, վճարման կարգն ու չափը և խնամատար ընտանիքին երեխային դաստիարակման հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին», ՀՀ Կառավարության N1116-Ն որոշումը «Հիդիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները հաստատելու մասին», ՀՀ Կառավարության N949-Ն որոշումը «Մանկական մահացության ու



ծնունդների գրանցման և դասակարգման հիմնախնդիրների հետ կապված իրավիճակը բարելավելու մասին», ՀՀ Կառավարության N164-Ն որոշումը «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին», ՀՀ Կառավարության N39-Ն որոշումը «Երեխայի իրավունքների պաշտպանության 2013թ.-ի տարեկան ծրագիրը հաստատելու մասին», ՀՀ Կառավարության N48-Ն որոշումը «Անձի պահպանված աշխատունակության աստիճանի որոշման հիման վրա հաշմանդամության սահմանման մոդելի հայեցակարգի մասին», ՀՀ Կառավարության N1207-Ն որոշումը «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին», ՀՀ Կառավարության N1039-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին», արտասահմանյան երկրների օրենսդրությունը, երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող պետական մարմինների որոշումներն ու ակտերը, միջազգային կազմակերպությունների հետազոտությունների արդյունքում ստացված վիճակագրական տվյալները և այլն:

**Ատենախոսության փորձառնական հիմքը:** Ատենախոսության փորձառնական հիմքն են հանդիսացել երեխայի իրավունքների ու ազատությունների սահմանադրաիրավական պաշտպանության վերաբերյալ դատական պրակտիկայի նյութերը, մասնավորապես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով 01.04.2011թ.-ի որոշումը, ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով 01.07.2011թ.-ի որոշում, ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԱՌԱԴ/0264/02/11 քաղաքացիական գործով 27.12.2011թ.-ի որոշումը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) դատական ակտերը, որոնք անմիջականորեն վերաբերում են Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով ամրագրված իրավունքներին և էական նշանակություն ունեն նյութական իրավունքի միատեսակ կիրառման համար:

**Ատենախոսության մեթոդաբանական հիմքը:** Մույն աշխատանքի շրջանակներում, պայմանավորված քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններով, հետազոտությունները կատարվել են ինչպես ընդհանուր աշխարհայացքային-փիլիսոփայական մոտեցումների, այնպես էլ հատուկ մեթոդների կիրառմամբ: Մասնավորապես, կիրառվել են պատմական, համակարգային-կառուցվածքային, իրավաբանական վերլուծության, ընդհանրացման, համեմատական-իրավական, լեզվատրամաբանական մեկնաբանման մեթոդները: Ատենախոսությունում լայնորեն օգտագործվել է համեմատական-իրավական մեթոդը, որի կիրառմամբ քննարկվող հիմնախնդրի կապակցությամբ համեմատական վերլուծության են ենթարկվել ՀՀ և արտասահմանյան երկրների օրենսդրության համապատասխան դրույթները, միջազգային կառույցների կողմից դրանց առնչությամբ առաջադրված ընդհանուր մոտեցումները և այլն:

**Ատենախոսության օբյեկտը և առարկան:** Մույն ատենախոսության ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում արդի ՀՀ-ում երեխայի

իրավունքների և օրինական շահերի ապահովման ոլորտի հասարակական հարաբերությունները:

Ուսումնասիրության առարկա են ՀՀ-ում երեխայի իրավական կարգավիճակին վերաբերող հայեցակարգային մոտեցումները, օրենսդրական կարգավորումները և երեխայի իրավական կարգավիճակի ամրապնդմանն ուղղված միտումները:

**Ուսումնասիրության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակն է երեխայի իրավական կարգավիճակի և դրա ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների ձևական-իրավական և բովանդակային կողմերի բացահայտումը, համալիր վերլուծությունը և գիտական իմաստավորումն ու դրանց հիման վրա երեխայի իրավունքների ու ազատությունների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ու այդ ոլորտում ՀՀ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը: Հիմնական նպատակին զուգահեռ վերհանվել են նաև ժամանակակից պայմաններում վերոհիշյալ իրավահարաբերությունների ոլորտում առկա դրանց իրագործման բարդությունները: Հիշյալ նպատակը կանխորոշել է հետևյալ խնդիրների լուծումը.

1. վերլուծել երեխայի իրավունքների տեսա-մեթոդոլոգիական հիմքերն ու երեխայի իրավական կարգավիճակը սահմանադրական իրավունքի համատեքստում,

2. ուսումնասիրել երեխայի իրավունքները մարդու իրավունքների համակարգում և վերլուծել երեխայի՝ որպես իրավունքի հատուկ սուբյեկտի առանձնահատկությունները,

3. անդրադառնալ երեխայի անձնական, սոցիալական և այլ իրավունքների ու ազատությունների ապահովման որակին ու պաշտպանվածության աստիճանին և համապատասխան մարմինների կողմից այդ իրավունքների պաշտպանության վերլուծությանը ժամանակակից պայմաններում,

4. ուսումնասիրել երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային օրենսդրությունը և համեմատական վերլուծություն կատարել ՀՀ ներպետական օրենսդրության հետ՝ վերջինիս համապատասխանությունը միջազգային չափանիշներին ի հայտ բերելու համար,

5. մշակել երեխայի իրավունքների սահմանադրաիրավական երաշխիքների ապահովման ոլորտում ՀՀ օրենսդրության կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ՝ ներպետական օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցման նպատակով,

6. վերհանել օրենսդրական այն բացերը և իրավակիրառ բնույթի այն թերացումները, որոնք նվազեցնում են երեխայի պաշտպանվածության մակարդակը կամ խոչընդոտում նրա բնական ու սահմանադրորեն ամրագրված իրավունքների և ազատությունների իրականացմանը:

## **Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները:**

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ հայկական իրավագիտության մեջ առաջին անգամ թեկնածուական ատենախոսության մակարդակով իրականացվել է երեխայի իրավունքների և ազատությունների ու դրանց ապահովմանն ուղղված հիմնահարցերի մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրություն, առավել վիճահարույց հարցերի վերհանում և առկա խնդիրների լուծման առնչությամբ համալիր ու ամբողջական հետազոտություն: Գիտական արժեք են ներկայացնում նաև տեսական եզրահանգումների հիման վրա օրենսդրական մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկությունները: Ատենախոսական հետազոտության արդյունքներով պաշտպանության են ներկայացվում մի շարք եզրահանգումներ, տեսական հիմնադրույթներ և առաջարկություններ, որոնք, գիտական նորույթ հանդիսանալով, հանգում են հետևյալին՝

1. Երեխայի իրավունքները որպես իրավական հատուկ կատեգորիա դիտարկելը, ինքնին առաջնահերթ պայմանավորված է երեխաների հատուկ պաշտպանության անհրաժեշտությամբ և սահմանադրական իրավունքի համատեքստում երեխայի իրավունքների տեսական-մեթոդոլոգիական բազայի ընդլայնման հնարավորությամբ: Միայն որպես իրավական կատեգորիա դիտարկելու դեպքում երեխայի իրավունքների մասին գիտելիքները բարձրացվում են այնպիսի մակարդակի վրա, որը թույլ է տալիս դրանք առավելագույնս ծառայեցնել պրակտիկային և կենսական կարևորագույն խնդիրների լուծմանը:

2. Երեխայի՝ որպես իրավունքի հատուկ սուբյեկտի, իրավական կարգավիճակի սահմանների որոշակիացնելը հանգեցնում է հասարակության մեջ նրա զբաղեցրած տեղի և դերի մասին հստակ պատկերացում կազմելուն, ինչը հնարավորություն է ընձեռում գիտական հարթության վրա վերլուծել երեխայի առնչությամբ «մարդ» և «անհատ» (հիմքում դնելով մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքը) եզրույթների հարաբերակցության հարցը, «իրավական կարգավիճակ» և «իրավական դրություն», «երեխա» և «անչափահաս» եզրույթների իրավական և բարոյական հիմքերը ու հիմնավորել, թե այդ եզրույթներից որոնք և ինչու են առավել կիրառելի երեխայի առնչությամբ:

3. «Երեխայի իրավունքներ» և «անչափահասի իրավունքներ» եզրույթների որոշակիացում, իրավաբանական ճիշտ կիրառում և սահմանազատում: Այդ եզրույթները կիրառող միջազգային և ազգային իրավական ակտերի վերլուծության արդյունքում հանգել ենք այն հետևության, որ «անչափահաս» հասկացությունն իրավական տեսանկյունից ընկալվում է որպես անձ, որի 18 տարին դեռևս չի լրացել, մինչդեռ ճշգրիտ իրավական մեկնաբանման համար «երեխա» եզրույթն ունի հստակեցման կարիք՝ ենթադրելով նաև ընտանեկան/ազգակցական կապերը: Չնայած իրավաբանական եզրույթների առումով այս երկու եզրույթներն էլ մասնագիտական են և երկու դեպքերում էլ ի

նկատի ունենք 18 տարին չլրացած անձ, սակայն «Երեխա» և «անչափահաս» եզրույթների համարժեքությունը կախված է դրանց բովանդակությունից: Փաստորեն այն եզրույթը, որը նշանակում է մինչև 18 տարեկան անձ՝ բազմաբնույթ է: Այնուամենայնիվ գտնում ենք, «անչափահաս» եզրույթի օգտագործումն առավել միտված է հարցի իրավական կողմի բացահայտմանը և չի արտահայտում «Երեխա» հասկացության ողջ էությունը թե՛ իրավական, թե՛ սոցիալական առումներով: Ոստի ելնելով Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի բովանդակությունից և «Երեխա» հասկացության առավել լայն սոցիալ-իրավական նշանակությունից՝ «Երեխա» եզրույթի կիրառումը համարում ենք նախընտրելի ընդհանրական առումներով, երբ անհրաժեշտ է շեշտադրել «Երեխային» որպես մարդկային էակ:

4. Հասարակական ու պետական կյանքում կարևորելով երեխայի՝ որպես իրավունքի հատուկ սուբյեկտի, տեղն ու դերը և ներկայացնելով երեխայի իրավունքները մարդու իրավունքների համակարգում՝ ներկայացվում է նրա զարգացման ու ձևավորման ավելի վաղ՝ ներարգանդային շրջանի սահմանադրաիրավական պաշտպանության հիմնախնդիրների վերլուծությունը: Վիճելի հարցերն ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ մենք փորձում ենք որոշակիացնել տարիքային այն սահմանը, որից սկսած դեռևս արտաքին աշխարհում ինքնուրույն գոյություն չունեցող մարդկային էակն ընկնում է իրավական պաշտպանության տակ: Վերլուծելով այդ հարցի վերաբերյալ միջազգային իրավական փորձը՝ տեսնում ենք, որ, չնայած մի շարք երկրների օրենսդրության մեջ չճնված երեխայի պաշտպանության վերաբերյալ իրավանորմերի ամրագրմանը, այնուամենայնիվ իրավական կարգավորումների գերակշռող մասը երեխայի՝ իրավունքներով օժտված լինելու հանգամանքը կապում է նրա ծնված լինելու պայմանի հետ: Որոշ իրավական ակտերում սաղմնավորված, բայց դեռևս չճնված երեխայի մասին հիշատակումը չի առաջացնում նրա՝ որպես իրավունքի հատուկ սուբյեկտ դիտարկելու հետևանքներ, նպատակ է հետապնդում ոչ թե նրանց որպես այդպիսիք պաշտպանության տակ առնելու, այլ նրանց համար ծնունդից հետո լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու նախապայման: Ներպետական օրենսդրությունը ևս երեխային իրավական պաշտպանության օբյեկտ է դիտարկում միայն ծննդյան պահից, այսինքն նրա պաշտպանության հիմքում դրվում է կենսունակության ապացուցումը միայն տեսանելի լինելու հանգամանքը, ինչը մարդասիրական մոտեցում չէ և իրավական տեսանկյունից արդարացված չէ:

Ուստի ելնելով երեխայի իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության կայունության և մարդասիրական նկատառումներից՝ պաշտպանության ենք ներկայացրել առաջարկություններ, որոնք թույլ կտան օրենսդրական մակարդակով երեխային ճանաչել որպես իրավունքի հատուկ սուբյեկտ, և նրան վերցնել իրավական պաշտպանության տակ ավելի վաղ ներարգանդային կյանքում, ինչը ֆիզիոլոգիական տեսանկյունից դիտարկվում է որպես մարդու կյանքի հնարավորություն:

5. Ատենախոսության մեջ երեխաների իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության երաշխիքներն ամբողջացվել են մեկ միասնական համակարգի մեջ, որը ներկայացված է որպես ինքնուրույն գիտական հասկացություն՝ ներառելով փիլիսոփայական, էթիկական, քաղաքական և իրավական մոտեցումները: Առանձնակի կարևորվել և ուսումնասիրվել են այդ համակարգի այնպիսի կարևորագույն տարրերը, ինչպիսիք են երեխայի իրավունքների ապահովման ներպետական և միջազգային իրավական տարրերը, զուգահեռներ են անցկացվել նրանց միջև, վերհանվել են ընդհանուր նպատակին ուղղված համագործակցության եզրերը:

Ուսումնասիրության արդյունքում վերհանվել են խնդիրներ՝ պետության և հասարակության հետ առկա փոխհարաբերություններում անձի անհատականությունն ու յուրօրինակությունն ապահովող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են երեխայի ծննդի գրանցումը և հիմնավորվել, որ երեխայի ծննդի չգրանցելը ոչ միայն անօրինական է, այլ նաև զրկում է երեխային լիարժեք քաղաքացի լինելու ու պետության կողմից պաշտպանված քաղաքացի մեծանալու հնարավորությունից, երեխայի որդեգրման ինստիտուտը, անչափահասների մասնակցությամբ արդարադատությունը, անչափահաս ազատագրկվածների կրթության և մասնագիտական ուսուցման հարցը, մտահոգիչ հիմնահարցեր՝ առկա մանկական աշխատանքի, սեղեկտիվ աբորտների, սոցիալական որբության ոլորտներում, բացեր, որոնք ի հայտ են գալիս երեխայի քաղաքական իրավունքների իրացման ոլորտում տարիքային շեմի ամրագրման բացակայության արդյունքում, վիճահարույց հարցեր երեխայի հայացքների նկատմամբ հարգանքի և պատշաճ ուշադրության սկզբունքի կապակցությամբ և կատարվել ու պաշտպանության են ներկայացվում առաջարկություններ, որոնք հնարավորություն կտան օրենսդրական մակարդակով վերանայել իրավակիրառ պրակտիկայում առկա թերությունները և էապես կնպաստեն այդ ոլորտների նկատմամբ հետևողական քաղաքականության մշակմանը:

6. Պաշտպանության են ներկայացվել առանձին եզրահանգումներ՝ ուղղված երեխաների դեմ բռնության կանխարգելման մասին օրենքի ընդունմանը և դրանից բխող՝ երեխաների նկատմամբ բոլոր տեսակի բռնությունների կանխարգելման ազգային համապարփակ ռազմավարության մշակմանը, ինչպես նաև երեխայի հետ առնչվող մասնագիտական հաստատությունների աշխատակիցների հատուկ մասնագիտական և հոգեբանական գիտելիքների տիրապետման և համապատասխան պատրաստվածության չափորոշիչների սահմանմանը:

7. Երեխաների իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմն առավել կատարյալ դարձնելու համար պաշտպանության ենք ներկայացնում երեխայի իրավունքների պաշտպանի ինստիտուտի ներդրման առաջարկը, քանի որ այդ ինստիտուտը կոչված կլինի զարգացնելու երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրենսդրությունը միջազգային լավագույն փորձի ներդրմամբ և իր գործառույթները կիրականացնի անկախության,

անկողմնակալության, թափանցիկության, արդարության և հավասարության սկզբունքների հիման վրա:

**Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:** Աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ մենագրության ձևով համալիր վերլուծության են ենթարկվել երեխայի իրավունքների և ազատությունների ապահովման սահմանադրաիրավական հիմքերը: Այս առումով աշխատանքի հիմնական դրույթները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդրության մշակման, կատարելագործման, ինչպես նաև մարդու իրավունքների, սահմանադրական իրավունքի, երեխաների իրավունքների հատուկ դասընթացի ուսումնասիրության ժամանակ:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսության հիմնադրույթները և եզրահանգումները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավունքի և օրենսդրական գործընթացի ամբիոնում, ինչպես նաև ներկայացվել են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսության կառուցվածքը ձևավորվել է ուսումնասիրվող թեմայի առանձնահատկությունների, ուսումնասիրության առարկայի և նպատակների հաշվառմամբ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս ենթագլուխ պարունակող երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

## ԱՏԵՆԱՆՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են ատենախոսության նպատակներն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական նորույթն ու պաշտպանության առաջադրվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության նորմատիվ, փորձառնական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝** «Երեխայի սահմանադրական կարգավիճակի տեսաիրավական հիմնահարցերը» վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին՝ «Երեխա» և «անչափահաս» եզրույթների իրավական բովանդակությունը և հարաբերակցության հիմնահարցերը. տեսաիրավական վերլուծություն» ենթագլուխը հեղինակը նվիրել է այն գաղափարի զարգացմանը, որ մարդու իրավունքների համակարգում երեխաների ճանաչումը որպես առանձին խումբ թույլ է տալիս առավել արդյունավետ պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը: Նման պայմաններում երեխայի իրավունքները բարձրացվում են որակական նոր հարթության վրա, և այդ ժամանակի պահանջ հանդիսացող մոտեցումներն ու դրսևորումներն իրենց արտացոլումն են գտնում

նան գիտական-տեսական մակարդակներում: Սույն ենթագլխում բնորոշվել է մանկությունը՝ որպես մարդու ծննդյան պահից մինչև լիարժեք սոցիալական և հոգեբանական հասունության հասնելու ժամանակահատված, և ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել է ոչ թե որպես մարդու կյանքի նախապատրաստական փուլ, այլ որպես պետության լիարժեք և արդյունավետ պաշտպանության ներքո գտնվող անհատի ձևավորման պարտադիր փուլ: Տեսական հարթության վրա վերլուծվել է «Երեխայի իրավունքներ» և «անչափահասի իրավունքներ» իրավաբանական սահմանումների հարցը:

Առաջին գլխի երկրորդ՝ «Երեխայի՝ որպես սահմանադրական իրավունքի հատուկ սուբյեկտի իրավունքների առանձնահատկությունները» վերտառությամբ ենթագլխում հեղինակը ներկայացրել է երեխայի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները՝ նրան որպես իրավունքի հատուկ սուբյեկտ դիտարկելու հիմնական նախապայման առանձնացնելով տարիքային շեմը: Երեխայի կարգավիճակում գտնվելու օրենսդրական մակարդակով որոշակիացված տարիքային սահմանն ատենախոսության մեջ պայմանավորված է մի շարք հանգամանքերով՝ կոնկրետ պատմական ժամանակաշրջանով, որում «ապրում է» պետությունը, իրավական փոփոխություններով, ազգային առանձնահատկություններով, առանձին պետությունների մոտեցումներով և այլն: Միևնույն ժամանակ մարդու կողմից իր իրավունքների իրականացման ժամանակային պայմանականությունը, որը նրան տրամադրվում է պետության կողմից օրենսդրական կարգով մանուկ լինելու պատճառով, հիմնավորված է այնպիսի անհատական անձնային հատկանիշներով, ինչպես նրա ֆիզիոլոգիական զարգացումը, կենսաբանական և հոգեբանական առանձնահատկությունները: Երեխայի՝ որպես իրավունքի հատուկ սուբյեկտի առանձնահատկությունների շարքում վերլուծվել են նաև նրա կողմից իր իրավունքներն ու ազատությունները կենսագործելու այնպիսի սահմանափակ հնարավորությունները, ինչպիսին ծնողներից, օրինական ներկայացուցիչներից, պետական մարմիններից և սոցիալական հարաբերություններից լրիվ կամ մասնակի կախվածությունը և այլն:

Վերոգրյալների հաշվառմամբ հեղինակը հանդես է եկել երեխայի ծննդյան պահը և իրավունակության սկիզբը սահմանող իրավական հատուկ կառուցակարգի մշակման, նրա կյանքի ավելի վաղ փուլի պահպանմանն ուղղված նորմերի ընդլայնման և խստացման ու երեխայի՝ իրավունքի մյուս սուբյեկտների հետ իրավահավասարության հավասարակշռման առաջարկություններով:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝** «Երեխայի իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները» բաղկացած է երկու ենթագլուխներից:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ վերնագրված «Երեխայի իրավունքների պաշտպանության երաշխիքների համակարգը» հեղինակը երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիքները ներկայացրել է որպես մեկ ամբողջական համակարգ, որը ներառում է

տնտեսական, կազմակերպա-կառավարչական, ներպետական և միջազգային տարրերը ուսումնասիրելով սոցիալ-իրավական տեսանկյունից: Այդ տարրերից յուրաքանչյուրը կոչված է ապահովելու այն հիմնական միջոցներն ու եղանակները, որոնք միտված են երեխայի արժանապատիվ գոյությանը, այդ գործում իշխանության դերակատարմանը, իրավական կարգավորումներին ու վերահսկողությանը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը՝ «Երեխայի իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում» հեղինակն անդրադարձել է երեխաների պաշտպանության ուղղությամբ ներպետական քաղաքականության, ազգային գործողությունների սկզբունքների ու նպատակների պարզաբանմանը և ներկայացրել այդ գործողությունների իրականացման ուղիները: Երեխայի իրավունքների ապահովման ներպետական կառուցակարգի կարևորագույն ոլորտներից ուսումնասիրվել են առողջապահության, սոցիալական ապահովության, կրթական համակարգի, մշակութային զարգացման, անչափահասների արդարադատությանը վերաբերող հարցերը, անդրադարձ է կատարվել բարեփոխումների կարիք ունեցող որոշ ոլորտների: Վերոհիշյալ խնդիրների կանոնակարգման արդյունավետության նկատառումներից ելնելով կատարվել են համապատասխան առաջարկություններ:

**Եզրակացություն** մեջ ընդհանրացված կերպով ներկայացվում են ատենախոսական հետազոտության հիմնական արդյունքները, որոնց հիման վրա կատարվել են հետևյալ առաջարկությունները.

1/ Երեխայի ներարգանդային շրջանի պաշտպանության հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներպետական օրենսդրությունը երեխայի իրավունքներով օժտված լինելու նախապայման է համարում երեխայի ծնված լինելու հանգամանքը: Երեխայի կյանքի պաշտպանության հիմքում դրվում է նրա կենսունակության ապացուցումը միայն տեսանելի լինելու գործոնով:

Փաստորեն, թեկուզև դեռևս չծնված, սակայն ֆիզիկապես ձևավորված և կենսունակ մարդկային էակի կյանքը պաշտպանված չէ օրենքով, քանզի կյանքի սկիզբ է համարվում միայն նրա լույս աշխարհ գալու պահը, ինչը մարդասիրական չէ և արդարացված չէ իրավական տեսանկյունից:

Ուստի ելնելով երեխայի՝ որպես ապագա սերնդի ներկայացուցչի իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության և մարդասիրական նկատառումներից՝ առաջարկ է կատարվել օրենսդրական մակարդակով երեխային ճանաչել որպես իրավունքի սուբյեկտ և նրան վերցնել իրավական պաշտպանության տակ նրա ձևավորման ավելի վաղ էտապում: Չծնված երեխայի իրավական գոյությունը ճանաչելու և նրան իրավական պաշտպանության տակ առնելու համար պետք է գծել որոշակի սահմանագիծ: Բեղնավորման պահից սկսած 10 շաբաթվա տևողությունը ունի բարոյական և գիտական հիմնավորում, ուստի հենց այդ ժամանակահատվածը կարելի է դիտարկել որպես սահմանագիծ:



Ավելի կոնկրետ՝ մոր և երեխայի իրավունքների հավասարակշռության ապահովման նկատառումներից ելնելով և հաշվի առնելով գիտականորեն հաստատված այն տեսակետը, որ սաղմի՝ որպես մարդկային էակ դիտարկվելու սկզբնակետ է համարվում գլխուղեղի աշխատանքը, որը սկսվում է սաղմի գոյության 10 շաբաթական ժամանահատվածից, գտնում ենք, որ պետք է օրենսդրական մակարդակով նվազեցնել աբորտների կատարման թույլատրման նվազագույն շեմը՝ 12 շաբաթականից իջեցնելով 10 շաբաթականի և երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված նորմերի գործողությունը ևս սկսել 10 շաբաթականից: Տաս շաբաթական ներարգանդային հասունացման փուլում գտնվող սաղմի այս տարիքը պետք է դառնա առավելագույն սահմանագիծ ներարգանդային պայմաններում գտնվող և գիտափորձերի եկթարկվող սաղմերի, ինչպես նաև հղիության արհեստական ընդհատման համար:

2/ Հայաստանի Հանրապետությունում երեխայի անձնական իրավունքների՝ որպես պետության և հասարակության հետ փոխհարաբերություններում անձի անհատականությունն ու յուրօրինակությունն ապահովող իրավական հնարավորությունների շարքում մտահոգիչ է երեխայի ծննդի գրանցման և, որպես հետևանք, նաև անվան և քաղաքացիության իրավունքի իրացման հարցը: Չնայած առկա իրավակարգավորումներին և ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում ուրույն մշտականությունից՝ Հայաստանում դեռևս հանդիպում են երեխայի ծնունդը չգրանցելու դեպքեր:

Դրանց պատճառներից են ծնողների մոտ անձը հաստատող փաստաթղթերի բացակայությունը և դրանք ձեռք բերելու դժվարությունները, տնային ծննդաբերությունները, որոնք հետագայում չեն գրանցվում, վարչական համակարգի դժվարամատչելիությունը, ծնողների կողմից ծննդի գրանցման կարևորությունը չգիտակցելը և այլն: Երեխայի ծնունդը չգրանցելը ոչ միայն անօրինական է, այլև գրկում է երեխային լիարժեք քաղաքացի լինելու ու պետության կողմից պաշտպանված քաղաքացի մեծանալու հնարավորությունից: Վերոհիշյալ հիմնահարցի կարգավորման նպատակով անհրաժեշտ ենք համարում ՀՀ օրենսդրության մեջ որոշ հստակ մեխանիզմների ներդրում, մասնավորապես օրենսդրորեն այնպիսի դրույթների ամրագրում, որ ծննդաբերած կինը կարող է բժշկական հաստատությունից դուրս գրվել միայն երեխայի ծննդականի առկայության դեպքում: Չնայած այս գործողությունն ապահովվում է իրավակիրառ պրակտիկայում, սակայն օրենքով այն ամրագրելը հնարավորություն կընձեռնի դա կատարել իմպերատիվ ձևով և չպայմանավորել իրավակիրառողի բարյացակամությունից ու բարեխղճությունից:

Նշված հիմնահարցի լուծմանն էապես կնպաստի նաև վարչական շրջանների ղեկավարների հետևողական քաղաքականությունն արտահիվանդանոցային պայմաններում տեղի ունեցած ծննդաբերությունների նկատմամբ և ՔԿԱԳ ընդհանուր համակարգչային տեղեկատվական ցանցի ստեղծումը՝ տեղեկատվության արագ փոխանցման և ՔԿԱԳ ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

3/ Երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում մտահոգիչ է երեխաների սոցիալական որբության երևույթը: Որք երեխաների մեծ մասը շարունակում է դաստիարակվել մանկատներում, ինչը խիստ բացասաբար է անդրադառնում երեխայի բարոյահոգեբանական և զգացմունքային վիճակի ու նրանց սոցիալականացման գործընթացի վրա: Այս կապակցությամբ առաջարկում ենք ընդլայնել այլընտրանքային այնպիսի ծառայության կիրառման հնարավորությունը, ինչպիսին խնամատար ընտանիքի ինստիտուտն է, որը կհանգեցնի երեխաների հոսքի նվազմանը դեպի մանկատներ և երեխաների համար կապահովվի ընտանեկան միջավայրում ապրելու և դաստիարակվելու հնարավորություն:

4/ Ստենախոսության մեջ որոշակի տեսակետ է հայտնվել նաև երեխայի հայացքների նկատմամբ հարգանքի և պատշաճ ուշադրության սկզբունքի կապակցությամբ: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան ամրագրել է, որ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետությունները պետք է ապահովեն դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Կոնվենցիան չի նախատեսում երեխայի՝ սեփական հայացքներն ազատորեն արտահայտելու իրավունքի իրացման որևէ տարիքային սահմանափակում: ՀՀ օրենսդրությամբ այդպիսի սահմանափակում առկա է:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածն ամրագրում է, որ երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության: Սեփական հայացքների ազատ արտահայտման իրավունքն ամրագրված է նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքում, որտեղ նախատեսվում է 10-ամյա տարիքային շեմը երեխայի ազգանունը փոխելիս, որդեգրման դեպքերում, առանձին ապրող ծնողների պարագայում երեխայի խնամքի հարցը լուծելիս: Այդ սկզբունքն ամրագրող միջազգային և ներպետական նորմերի վերլուծության արդյունքում կատարվել է այն եզրահանգումը, որ նման տարիքային շեմի սահմանումը կարող է հակասական լինել՝ պայմանավորված յուրաքանչյուր երեխայի մտավոր և գիտակցական ունակություններով: Հետևաբար կարելի է ասել, որ ազգային օրենսդրության այդպիսի նորմերը հակասության մեջ են մտնում Կոնվենցիայի 12-րդ հոդվածի հետ: Ուստի առաջարկվել է ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարել փոփոխություն՝ վերացնելով տարիքային այն սահմանը, որին հասնելու դեպքում է միայն դատարանը հաշվի առնում երեխայի կարծիքը: Սեփական հայացքների ազատ արտահայտման իրավունքի վերապահումը պետք է կրի անհատական բնույթ և պայմանավորված լինի երեխայի մտավոր և գիտակցական ունակություններով և կոնկրետ իրավիճակի առանձնահատկություններով:

5/ Կրթության ոլորտում մտահոգիչ է անչափահաս ազատագրկվածների կրթության և մասնագիտական ուսուցման հարցը: Օրենսդրության մեջ առկա են այդ ոլորտը կարգավորող օրենսդրական հակասություններ: Այսպես. ՀՀ կառավարության 06.09.2007թ. N1028-Ն որոշմամբ հաստատվել է «Նախնական

մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստենսատով) ուսուցման կարգերը»: Նշված կարգերում թույլատրված ուսուցման ձև է հանդիսանում նաև ուսումնական նյութերով ուսանողի ինքնուրույն աշխատանքը՝ առանց լսարանային կամ լաբորատոր պայմանների առկայության: Սակայն Կառավարության մեկ այլ՝ 03.08.2006թ. N1543-Ն որոշմամբ դրսեկության կարգով հանրակրթությունը և նախնական մասնագիտական կրթությունն արգելված է անչափահաս կալանավորվածներին և դատապարտյալներին: Այստեղ ակնհայտ են դառնում օրենսդրական հակասությունները:

Օրինակ՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքով թույլատրվում է հեռավար կրթություն, սակայն կառավարության որոշմամբ հեռահաղորդակցություն ապահովող սարքերը (այդ թվում՝ ինտերնետ) հաստատված են արգելված իրերի ցանկում: Նկատի ունենալով, որ անչափահաս դատապարտյալի ուղղումը և հասարակությունում նրա վերաինտեգրման երաշխիքներից մեկը կրթությունն է, ուստի անհրաժեշտ է լրացումներ կատարել ՀՀ կառավարության թիվ 1543-Ն որոշման մեջ՝ անչափահաս դատապարտյալի կրթության իրավունքի իրականացումը դիտելով որպես սոցիալական վերականգնման միջոց, ինչպես նաև համապատասխան փոփոխություն կատարել ՀՀ քրեակատարողական օրենսգրքում:

6/ Ատենախոսությունում հանգամանորեն ներկայացվել է երեխաների իրավունքների խախտման ռիսկայնություն պարունակող և նրանց իրավունքների պաշտպանության կարիք ունեցող այնպիսի ոլորտը, ինչպիսին անչափահասների արդարադատությունն է: Այդ ոլորտը կանոնակարգող բոլոր միջազգային փաստաթղթերը կարևորում են անդամ պետությունների ազգային օրենսդրություններում այնպիսի նորմերի ամրագրումը, ինչպիսիք են այն նվազագույն տարիքի սահմանումը, որից ցածր երեխաները պետք է զերծ մնան քրեական պատասխանատվությունից, ազատագրվման՝ որպես ծայրահեղ միջոցի կիրառման հնարավորությունը, ազատությունից զրկելու փոխարեն այլընտրանքային տարբերակների մշակումը՝ հաշվի առնելով ազատագրվման խարանիչ և ոչ մարդասիրական բնույթն անչափահասի հանդեպ, իրավախախտ երեխայի նկատմամբ մարմնական պատժի՝ որպես դաժան, անմարդկային և ստորացուցիչ վերաբերմունքի արգելումը և անչափահաս օրինազանցների նկատմամբ հարգանքի վերականգնման, սոցիալական վերաինտեգրման համար նպաստավոր ու արդյունավետ մեխանիզմների մշակումը:

Վերոհիշյալ նպատակներին հասնելու արդյունավետության նպատակով առաջարկվել է անչափահաս օրինազանցների հետ կապված գործերի քննության համար ստեղծել մասնագիտացված դատարաններ, որտեղ գործերի վարման համար պատասխանատու բոլոր դատավորները կունենան հատուկ գործելառճ և կստանան համապատասխան բազմամասնագիտական ուսուցում երեխայի իրավունքների, հոգեբանության և այլ հարակից ոլորտներում:

7/ Ատենախոսության առանձին առանցքային եզրահանգումներ վերաբերում են որդեգրման ինստիտուտի բարելավման ուղղություններին: Որդեգրումն իր մարդասիրական դրսևորմամբ հանդերձ կարող է ոչ մարդասիրական դրսևորումների միջոց դառնալ: ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն անօրինական որդեգրման համար պատասխանատվություն նախատեսող նորմեր: Ախկալյին է նաև հայ երեխաների որդեգրումն օտարերկրացիների կողմից: Օտարերկրացիների կողմից որդեգրվող հայ երեխաների ապահովության հարցը դրված է հյուպատոսարանների վրա, որոնց գործառույթները սակայն եզրափակվում են միայն այդ երեխաների հաշվառմամբ և առկա չեն որդեգրումից հետո այդ երեխաների հետագա ճակատագրի վերահսկման մեխանիզմներ: Ուստի ելնելով ինչպես երկրի ներսում, այնպես էլ օտարերկրացի քաղաքացիների կողմից որդեգրված հայ երեխաների անվտանգության ապահովման նկատառումներից՝ պաշտպանվում և հիմնավորվում է այն տեսակետը, որ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով պատասխանատվություն սահմանել անօրինական որդեգրումների համար և փոփոխություն կատարել «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքում՝ հյուպատոսարանների համար սահմանելով որդեգրման հանձնված հայ երեխաների որդեգրված ընտանիքում ինտեգրման և հետագա ապրելակերպի նկատմամբ վերահսկողության պարտականություն:

8/ Որոշ իրավական բացեր են ի հայտ գալիս նաև երեխաների քաղաքական իրավունքների իրացման ոլորտում: Քաղաքական իրավունքների իրականացման պրոբլեմը ավելի հաճախ ծագում է օրենսդրության մեջ տարիքային ցենզի ամրագրման բացակայությունից: Քաղաքական իրավունքներ ունենալու, մասնավորապես՝ ընտրական իրավունքից օգտվելու հնարավորությունը օրենսդիրը կապում է լիարժեք գործունակության ձեռքբերման, այն է՝ 18 տարեկանի հետ: 10-ամյա տարիքային ցենզ է սահմանվում նաև երեխաների՝ հասարակական կազմակերպություններին անդամագրվելու համար: Սակայն բացակայում են օրենսդրական կարգավորումները խաղաղ, անզեն հավաքներ անցկացնելու սահմանադրական իրավունքի իրականացման համար, առկա չեն որևէ սահմանագիծ նախատեսող տարիքային սահմանափակումներ:

ՀՀ Սահմանադրությունը խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունք է տալիս Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին, առանձնակի չնշելով երեխաների մասին, հետևաբար անհրաժեշտ է որոշակիացնել այն տարիքը, որից սկսած երեխաներն իրավունք ունեն մասնակցելու խաղաղ հավաքների:

9/ Հայաստանի Հանրապետությունում ահագնացող մասշտաբների են հասնում սելեկտիվ աբորտները: Ատենախոսության մեջ վերլուծելով հղիության արհեստական ընդհատման հարցը և ուսումնասիրելով «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» 2002թ.-ի ՀՀ օրենքի հղիության արհեստական ընդհատմանը /աբորտին/ վերաբերող 10-րդ հոդվածը, ըստ որի՝ յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման իրավունք և օրենքը թույլատրում է կնոջ դիմումի

հիման վրա հղիության արհեստական ընդհատում մինչև տասներկու շաբաթական ժամկետը, բացառությամբ մինչև քսաներկու շաբաթական հղիության ժամկետը հղիության արհեստական ընդհատման թույլատրելիությունը բժշկատոմարական ցուցումների առկայության դեպքում, ուստի ելնելով մոր և երեխայի իրավունքների հավասարակշռության ապահովման նկատառումներից և հաշվի առնելով գիտականորեն հաստատված այն տեսակետը, որ սաղմի՝ որպես մարդկային էակ դիտարկվելու սկզբնակետ է համարվում գլխուղեղի աշխատանքը, որը սկսվում է սաղմի գոյության 10 շաբաթական ժամանահատվածից, առաջարկ է կատարվել օրենսդրական մակարդակով նվազեցնել աբորտների կատարման թույլատրման նվազագույն շեմը՝ 12 շաբաթականից իջեցնելով 10 շաբաթականի և երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված նորմերի գործողությունը և սկսել 10 շաբաթականից: Ինչպես հայտնի է, 10 շաբաթական ներարգանդային կյանքում հնարավոր չէ ճշգրիտ որոշել երեխայի սեռը, ուստի աբորտների կատարման թույլատրելիության այդ նվազագույն շեմի իջեցմամբ հնարավոր է ոչ միայն պաշտպանության տակ վերցնել պտղի կյանքը, այլ նաև միաժամանակ դրանով հնարավորինս լուծել Հայաստանի Հանրապետությունում սպառնացող մասշտաբների հասնող սելեկտիվ աբորտների հարցը:

10/ Ի վերջո, երեխաների իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմն առավել կատարյալ դարձնելու համար արդյունավետ է համարվել խորհրդարանին առընթեր երեխայի իրավունքների պաշտպանի ինստիտուտի ստեղծումը՝ հիմնված անկախության, ինքնավարության, անկողմնակալության, թափանցիկության, արդարության, հավասարության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության սկզբունքների վրա: Այն պետք է պայմանավորված լինի ավելի ուղղակի և ակտիվ մոտեցմամբ, իրագործվի հանրային մարմինների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության միջոցով: Այն մշտադիտարկում կիրականացնի Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառման նկատմամբ, հանդես կգա երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրենսդրության զարգացման և միջազգային լավագույն փորձի ներդրման և օրենսդրական բարեփոխումների նախաձեռնություններով:

11/ Պաշտպանության են ներկայացվել նաև առանձին եզրահանգումներ՝ միտված պետական մակարդակով երեխաների բռնության կանխարգելման մասին օրենքի ընդունմանը և դրանից բխող՝ երեխաների նկատմամբ բոլոր տեսակի բռնությունների կանխարգելման համապարփակ ազգային ռազմավարության մշակմանը, ինչպես նաև երեխայի հետ առնչվող մասնագիտական հաստատությունների աշխատակիցների հատուկ մասնագիտական և հոգեբանական գիտելիքների տիրապետման և համապատասխան պատրաստվածության չափորոշիչների սահմանմանը:

Վերոհիշյալ ոլորտների նկատմամբ հետևողական քաղաքականության մշակումը և երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող պետական

մարմինների համակարգված գործելաժողով էապես կնպաստի այդ գործառույթների ձևական թերի իրականացումը արդյունավետ իրականացման վերափոխմանը:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝**

1. «Երեխայի իրավունքների ապահովման հիմնահարցը կայուն զարգացման կոնցեպցիայի համատեքստում»//Արդարադատություն, 2012թ., թիվ 4, էջեր 35-39:

2. «Երեխաների իրավունքների ապահովման ներպետական կառուցակարգը Հայաստանի Հանրապետությունում»// Հանրային կառավարում, 2013թ. թիվ 1, էջեր 124-133:

3. «Երեխայի իրավունքների պաշտպանության միջազգային և հայաստանյան ընթացակարգերը»//Вестник Российско-Армянского университета, 2013թ., էջեր 60-69:

4. «Չձևված երեխայի իրավական կարգավիճակի հիմնախնդիրները երեխայի իրավունքների համատեքստում»// Արդարադատություն, 2013թ., թիվ 2, էջեր 21-25:

5. «Երեխան՝ որպես իրավահարաբերությունների հատուկ սուբյեկտ»// Հանրային կառավարում, 2014թ. թիվ 1, էջեր 245-253:

## ИСКАНДАРЯН СИМА АЛЬБЕРТОВНА

### КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ЗАЩИТЫ ПРАВ ДЕТЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

#### РЕЗЮМЕ

Диссертация посвящена комплексному исследованию проблем конституционно-правовых гарантий защиты прав детей в Республике Армения. Целью диссертации является изучение и анализ правового статуса ребенка и конституционно-правовых гарантий защиты его прав и законных интересов, выявление тех недостатков, которые создают препятствия в процессе их реализации, внесение предложений, направленных на усовершенствование законодательства в области защиты прав и законных интересов детей.

Научная новизна работы заключается в том, что впервые в РА на уровне кандидатской диссертации на основе изучения теоретического материала и практики проведено всестороннее исследование проблем в области защиты прав и законных интересов ребенка и анализа гарантий для их обеспечения и реализации.

Практическая значимость диссертации состоит в том, что основные положения и выводы исследования могут быть использованы при разработке и совершенствовании законодательства в области защиты конституционных прав ребенка, а также в учебном процессе юридических учебных заведений.

Диссертация состоит из введения, двух глав, с подразделением на параграфы, заключения, списка использованной литературы и приложения.

Во введении представлена актуальность и научная новизна исследования, степень изученности вопроса, цели и задачи работы, ее предмет и объект, методологическая, теоретическая, эмпирическая и нормативная основы, положения выносимые на защиту, а также представлены теоретическая и практическая значимость и апробация материала исследования.

В первой главе диссертант обосновывает то положение, что признание детей в качестве отдельной группы в системе прав человека позволяет выделить его как самостоятельную правовую категорию и эффективнее защитить их права и законные интересы. В таких условиях права ребенка поднимаются на качественно совершенно новый уровень. Раскрыто значение детства как важнейшего этапа в жизни ребенка, которое начинается с момента рождения до полного его социального и психологического развития, а в рамках данного исследования оно подчеркивается не как подготовительный, а как обязательный этап в жизни человека, находящегося под полной защитой государства. Детально исследованы особенности правового статуса ребенка, среди которых особое место занимают возрастные, а также физиологические и психологические особенности. Особую значимость представляют суждения, исследования в области прав неродившегося ребенка, а также вытекающие из этих суждений соответствующие предложения, направленные на создание гарантий для его защиты.

Во второй главе данной работы гарантии защиты прав ребенка представлены как целостная система, которая включает в себя экономический, организационно-управленческий, внутригосударственный и международный элементы, каждый из которых призван обеспечивать те основные способы защиты прав ребенка, которые направлены на создание условий для достойного существования ребенка в обществе, а также правовую регламентацию и контроль со стороны государства. Проведен сравнительный анализ между межгосударственными и международными средствами конституционно-правовых гарантий прав ребенка с целью выявления достоинств и недостатков существующей системы.

В заключении диссертант излагает основные выводы диссертационного исследования, в том числе конкретные предложения по законодательным изменениям и дополнениям, что позволит создать надежные гарантии для конституционно-правовой защиты прав и законных интересов ребенка.



**SIMA A. ISKANDARYAN**

**THE CONSTITUTIONAL-LEGAL GUARANTEES OF THE PROTECTION OF  
THE RIGHTS OF THE CHILDREN IN THE REPUBLIC OF ARMENIA**

**RESUME**

The thesis is devoted to the complex research of the problems of Constitutional and legal guarantees of the protection of the rights of Children in the Republic of Armenia.

The object of the dissertation is to study and to analyze the legal status of the child and the guarantees of the protection of the rights and the legal interests of the child, identifying the deficiencies creating obstacles in the process of their realization, to make suggestions for the improvement of the legislation of the Republic of Armenia in the field of protection of rights and legal interests of children.

The scientific novelty of this thesis is that for the first time in the Republic of Armenia on the basis of the theoretical material and practical legislative process a complete and comprehensive study of the problems of the rights and the legal interests of the child and analyses of the guarantees of their provision and realization has been performed.

The practical significance of the dissertation is that the basic provisions and deductions of the thesis can be used in the development and improvement of legislation in the sphere of Constitutional rights of the child as well as in the educational process of Law Institutions.

The dissertation consists of the Introduction, two chapters, which are subdivided into paragraphs, the Conclusion, the Bibliography and Appendices.

In the Introduction the author presents the novelty and the vital importance of the research, the degree of the study of the issue, the aims and problems of the dissertation, its subject and object, the methodological, theoretical, empiric and normative basis of the work, main issues to be revealed in the theses as well as the

theoretical and practical significance of the work. The approbation of the materials is also substantiated.

In the first chapter the author reveals the statement that the recognition of children as a separate group in the human rights system allows to distinguish them as a separate legal category and to more effectively protect their rights and legitimate interests. In such circumstances, the rights of the child are raised to an entirely new quality of level. The significance of childhood as the most important stage in a child's life has been revealed, which begins at the moment of birth until its full social and psychological development, and in frames of this study, it is emphasized as not as a preliminary, but as a mandatory step in the life of a person who is under the full protection of the state. Peculiarities of the legal status of the child have been studied in detail, among which a special place occupies age as well as physiological and psychological characteristics. Of particular importance are the statements and studies in the field of unborn child as well as the relevant suggestions arising from these judgments in purposes of establishment of guarantees for this protection.

In the second chapter of this work the guarantees of protection of the rights of the child are presented as an integral system, which includes economic, organizational, administrative, domestic and international elements, each of which is designed to provide those basic ways of protecting of the rights of a child, which are aimed at providing dignified existence of the child in society, as well as legal regulation and control by the state.

In the conclusion, the author presents the main deductions of the dissertation research, including specific proposals for legislative changes and additions that will enable to establish reliable guarantees for the constitutional and legal protection of the rights and legitimate interests of the child.



